

## ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

(Մրա գրական գործուն. 40-ամեակի առիթով)

### III

Սղայեանցի վերադարձը.—Նրա գործունէութիւնը դպրոցական ասպարիզում.—Մանկական գրականութիւնն.—Հքիաթները.—Ռտանաւորները.—Մանկական բանաստեղծութիւնները.—Սղայեանցը իբրև թարգմանիչ:

Պետերուրդում Սղայեանցը մնաց 1867 թիւը, երբ Գէորգ կաթողիկոսի կողմից հրաւիրուեց էջմիածնի տպարանը կարգի գնելու։ Նա վերադարձաւ Թիֆլիս, ուր և ամուսնացաւ։ Էջմիածնում նրան յանձնեցին տպարանի վերահսկողութեան հետ նաև Արարատի խմբագրի պաշտօնը։ Արարատում նա սկսեց առանձին ուշադրութիւն գարձնել գաստիարակչական խընդիրների վրայ, բայց մինչև վերջը չը կարողացաւ իր յօդուածներն ազատ տպագրել, որովհետեւ քիչ ժամանակից նրան ստիպեցին ենթարկուել մի տեսակ ցենզուրայի։ Ապա ընդհարուելով Մանկունի եպիսկոպոսի հետ՝ նա հեռացաւ էջմիածնից։

Դրանից յետոյ սկսում է նրա գործունէութիւնը իբրև ուսուցիչ և աեսուչ՝ Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Շուշում, Թիֆլիսի թեմում ևայլն։ Մէկ ու կէս տարի Փորձի խմբագրի օգնական է եղել, բայց ոչինչ չէ կարողացել գրել երեխ անհամապատասխան մթնոլորտի պատճառով։

Շուշում եղած ժամանակ նա գրեց իր «Անահիտը»։ Ապա նա հրաւիրուեց տ. Ա. Բաբայեանցի մանկապարտէցը, «որտեղ, ասում է նա, գրում էի մանկական երգեր... Այդ օրուանից յետոյ ահա ես գլխովին նուիրուեցի մանկական գրա-

կանութեան, որոնք տպագրուեցին Աղբիւրում մի քանի տարի շարունակյա։ Նոյն այդ թւականներին էլ նա ղեկավարում էր «Աղբիւրը», որը դարձաւ բաւական կենդանի մանկական ամս-սագիր։

Այն օրուանից, երբ նա գլխովին նուիրուեց մանկական գրականութեան, նա սկսեց զրել հէքիաթներ։ Սրանք մեծ մասամբ ժողովրդի մէջ եղած հէքիաթներն են, որ Աղայեանցը պատմում է իր գրաւիչ, սահուն ոճով, կոկելով, շտկելով։ Նրա հէքիաթներն են, որ նրան դարձրել են մեր մէջ մի եղակի գրող։ Նրա հէքիաթներն են—Անահիտ, Տորե-Անգեղ, Արեգնա-զան, Օձամանուկ և Արեահատ, Արեամանուկ, Օշափ, Առան-Բալա, Զանդի-Զրանդի, Եղեգնուհի, Այծատուր, Մանուկ-Խան։ ապա մանր պատմութիւններ, փոքրիկ հէքիաթներ, աւանդու-թիւններ, որոնք մեծ մասամբ դրուած են նրա դասագրերի մէջ։

Առաջին հէքիաթը, որ նա գրել է, «Անահիտ»-ն է։ Ես մտադրութիւն չ'ունեմ Աղայեանցի հէքիաթներով մանրամասն գրադուելու, քանի որ դա մի յատուկ ուսումնասիրութեան խըն-դիր է, նրանց համեմատելով Անդերսնի և ուրիշների ստեղ-ծագործութեանց հետ և դուրս բերելով Աղայեանցի տաղանդի առանձնայատկութիւնները։ Բայց մի համառօտ ակնարկ կ'անեմ դրանց վրայ։ Նկատողութեան արժանի է մի կողմը—Աղայեանցը հէքիաթներում նոյնիսկ մեծ հաճոյքով ընտրում է և չեշտում այնպիսի հերոսներ և առանձնայատկութիւններ, որոնք նրա կեանքի գծերում առանձին ուշագրութիւն են գրաւում։ Պրա-նով ևս ապացուցւում է, որ Աղայեանցը իր ոգեսորութեան աղ-րիւրը գտնում է գլխաւորաբար իր կեանքի մէջ։

«Անահիտը» աչքի է ընկնում նրանով, որ նա մի կամուրջ է վեպից դէպի հէքիաթը։ Իբրև քոն հէքիաթի բովանդակու-թեան համար ընտրուած է այն պատմական մոմենտը, երբ Մես-րոպ Մաշտոցը քարոզում էր քրիստոնէութիւն և տարածում էր հայոց գիրը։ Պատմական իրականութիւնն պատկերացնող այդ-պիսի կտորների հետ Անահիտում մնաք հանդիպում ենք ա-ռասպելական ստորերկրեայ մութ շնչերի, ուր աշխատեցնում են մարդկանց և մարդի միտ են ուտեցնում, թագաւորի որդին սիրահարուում է նախրչու աղջկան, նախրչու աղջիկ Անահիտը դառնում է մի շատ խելօք թագուհի, քաջ, պատերազմող և այլն... կտորներ, որոնք զուտ հէքիաթային են։ Հէքիաթի հիմ-նական միտքն այն է, որ ամեն ոք պիտի արհեստ գիտենայ, մինչեւ անգամ թագաւորի որդին, որովհետեւ

Ամեն հոգի, ամեն անհատ, եթէ գիտէ արհեստ, ուսում,  
Նա չի լինիլ տնանկ, աղքատ վտանգալից մեր աշխարհում:  
Արհեստն է, որ աղբիւրի պէս միշտ բլիսում է, միշտ ծլծում,  
Թէպէտ եւ մերթ նւազում է, բայց բնաւին չի ցամաքում:

**Աղայեանցի հէքիաթներից,** այսպէս ասած, ամենահէքիաթականը, անզուսակ ֆանտազիայով հարուստը «Արեգնազան»-ն է, ուր պատկերացրուած է սեռական անմեղութիւնը այն աստիւանի, որ հերոսը չը գիտէ, ինքը տղայ է, թէ աղջիկ. բայց աղաւնի աղջկան ջրումը լողանալիս տեսնելով, զգաց իր մէջ մի անսովոր, շատ հաճոյական բան, ապա ջրին նայելով տեսաւ երեսին նորածիլ բեխեր ու մօրուք և նոր իմացաւ, որ աղայ է եղել ինքը: Ահա այդ անմեղ արարածի ձեռքով է, որ վերջ է արուսմ չարի տիրապետութեանը: Նա խզում է չար պառաւի կափարդական գաւաղանները, կեանք է տալիս նրա քարաշրած քաղաքին, ձեռք է բերում անմահական ջուր, նրանով բժշկում է թագաւորի աղջկան, նրա հետ ամուսնում է, թագաւոր է զառնում և կախարդական գաւաղանները ծովը գցելով «չար ոդիների ու նրանց արբանեակների իշխանութիւնը» վերացնում է աշխարհից:

**Տորք-Անզեղը,** որ կէս պոէմա է, կէս հէքիաթ, ազքի է ընկնում բոլորովին ուրիշ տեսակէտից: Այսաեղ մենք գանում ենք բնաւորութեան աւելի հետաքրքիր, մանրամասն, բազմակողմանի պատկերացում, աւելի հասուն գաղափար, աւելի գեղեցիկ բանաստեղծական նկարագրութիւններ: Այսպէս է նկարագրուած Տորքի արտաքինը.

Տորքը չէր նման հասարակ մարդու,  
Այլ մի ածդահա եւ շատ անարկու.  
Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով՝  
Ճաճանչաւորուած արեւի լուսով.  
Սեւ-սեւ ունքերը՝ մութ ամպի նման՝  
Բարդ-բարդ կուտափուած աչքերի վրան,  
Բիթը կորընթարթ, իբրեւ մի բլուր,  
Ատամներն ուրագ, եղունգները թուր.  
Կուրծքը կասես թէ մի լանջ է լերան,  
Մէջքը սարաժայո, կոները գերան...

**Այս կազմուածքով Տորքը շատ ուժեղ է,** նրան հնագանդում են առիւծներն ու վագրերը, որոնք նրա հօտի պահապաններն են. նա իր ուժը գործադրում է նաև ժողովրդին պաշտ-

պանելու Մհ ծովի կողմից եկող աւագակների դէմ, նա շատակեր չէ և համբերող է. լաւ ճաշակ ունի, ժայռից քանդակում է արձաններ: Նա երազում տեսել է և սիրում է Հայկանուշ գեղեցկին, որը ապրում է մի ամրոցի մէջ: Նա գնում է այդ ամրոցը և իր ուժով ու ճարպկութեամբ երկիւղ է ազդում իրան հակառակորդ հականերին, որոնք յետ են քաշում և թողնում են Հայկանուշին ուզելու միտքը: Իսկ ինքը պիտի մրցէր Հայկանուշի հետ և յաղթէր, ապա կարող էր միայն նրա ամուսինը դառնալ. բայց մի ծերունի հսկայ առում է.

Ես կը հրամայեմ, որ մեր օրէնքով  
Մրցէր իրար հետ, բայց... սիրոյ գէնքով.  
Թա՞ղ սէրը լինի ծեր զէնքը մի հատ,  
Սիրեցէր միմեանց մինդ միւսից շատ.  
Դու նրան պաշտպան, նա քեզ պահապան,—  
Անա օրէնքը սուրբ ամուսնութեան:

Աղայեանցի միւս հէքիաթներից՝ մեզ հետաքրքրող հարցի տեսակէտից առանձնապէս աչքի է ընկնում «Օշափ»: Սա առանձին ոգենորութեամբ և վերասլաց տրամադրութեամբ գրուած մի հէքիաթ է՝ հիւսուած հին Յունաստանի առասպեկների վրայ: Ասիայում, Լիկիայի թագաւորութեան մէջ գուրս է ընկել մի հրէշ, որին անուանում են Քիմեր կամ Խմերա, բայց Աղայեանցը անուանում է «Օշափ»: Սա երեք գլուխ ունի, առիւծի, այծի և օձի, որոնց բերաններից կրակ է ժայթքում և լափում ասեն ինչ. նա արագավազ է և ճարպիկ, քարուքանդ է արել երկիրը: Լիկիայի թագաւորին տեսութեան է զալիս Բելեբոֆոն անունով մի երիտասարդ, որի քաջ կերպարանքը տեսնելով՝ թագաւորը առաջարիւմ է նրան գտնել Օշափին և սպանել: Բայց երիտասարդը նկատում է, որ Օշափի նման զօրաւոր և արագաշարժ հրէշի հետ յետիսն չէ կարելի կռւել, հարկաւոր է ունենալ մի շատ լաւ ձի. և դա կարող է լինել միայն Պեգասը, այն թեաւոր ձին, որ «օդի մէջ աւելի արագ է թռչում, քան վազում է երկրի երեսին»: Երիտասարդին ամեն կողմից սկսում են համոզել, որ թեաւոր ձի չը կայ, դա առասպել է: բայց նա չէ լսում, ճանապարհուում է Ելլադա, ուր Պեգասը երթեմն գալիս է Պիրենայի աղբիւրից ջուր խմելու: Երկար համբերեց, առկաց երիտասարդը, մինչև յաջողեցրեց ձեռք բերել Պեգասին, նրանով եկաւ Լիկիա, կռւեց Օշափի հետ, թէն քիչ վիրաւորուեց, բայց յաղթեց նրան և երկիրն ազատեց նրա ճիրաններից:

Ասացի, որ այս հեքիաթը մի առանձին ոգևորութեամբ և վերապաց տրամադրութեամբ է գրուած, ինչու որովհետեւ Աղայեանցը ինքը իր հայրենիքում տեսաւ մի նոյնանման Օշափ, բայց նրա հետ յաջողութեամբ կուելու համար նա զնաց հեռու երկիր, ապասեց, տոկաց, ձեռք բերեց թեաւոր ձին և վերադարձաւ հրէշի գէմ կուելու: Սյա հեքիաթում Աղայեանցը այնքան է ոգեորւում, որ չի համբերում, այլ փակագծի մէջ՝ կարդացող երեխաներին մի այսպիսի խորհուրդ է տալիս. «Ես ձեզ, սիրելի մանուկներ, խորհուրդ չեմ տալ կուելու այս երկրային զղուելի արարածների հետ, մինչև ձեռք բերած չը լինէք օդեղին թեաւոր ձին»: Ահա այս հանդամանքն է պատճառ Օշափի առանձնապէս գրաւչութեան:

Սյա տեսակէտից ուշագրութիւն են գրաւում նաև Ամանթալու և Մանուկ-Խան հեքիաթները:

Աւալն-Բալառում նկարագրուած թագաւորի որդին՝ Վուրզը՝ պառաւի կուժը կոտրած լինելու պատճառով՝ նրանից անէծքի է արժանանում, որ Անտես-Աննանի սիրովն այրուի, տանջուի: Եւ ազդուած պառաւի անէծքից, սիրելով Անտես-Աննանին, Վուրզը ընկնում է մի այնպիսի հոգեկան տրամադրութեան մէջ, որ Աղայեանցի մանկութեան դէպեհը են յիշեցընում: Այստեղ նա պատկերացրել է անզուսպ աենչի զօրութիւնը. ապա շարունակութեան մէջ բուն պատմութիւնը թողնելով՝ բացատրում է այսպէս: «Սյա այն սէրը չէ, որ մեր ժամանակ մեր աշխարհում կայ: Սա սէր էլ չէ իսկապէս, այլ մի զօրեղ փափագ, մի ուժգին իղձ, մի սաստիկ ցանկութիւն, մի մուրազ և ուրիշ այնպիսի զգացում, որ մարդ ունենում է իր սրափ ուզած երջանկութիւնը ձեռք բերելու համար: Այսպիսի իղձ մարդ կարող է ունենալ և՛ ուսում, գիտութիւն ձեռք բերելու համար, իր ուզած նշանաւոր միաքը իրագործելու համար, և՛ ուրիշ շատ բաներից»: (Աղբիւր, 1890.)

Իսկ Մանուկ-Խանը Աստծու ընտրած մի երեխայի պատմութիւն է, ինչպիսին իրան համարում է Աղայեանցը: Հեքիաթի սկզբում նա ասում է. «Ինչպէս մեծերի մէջ կան տիմար և իմաստուններ, իմաստութիւնը հասակից կախումն չ'ունի. այդ մի չնորը է, որ Աստուած նրան է տալիս, ում ընտրում է ինքը: Այսպիսի ընտրուածներ շատ քիչ են լինում թւով...» (Աղբիւր, 1890.)

Գեղեցիկ է նաև «Եղեգնուհին», ուր պատկերացրուած է այն գաղափարը, որ շարութիւնը միշտ կը պատժուի, իսկ անմեղու-

թիւնը և արդարութիւնը՝ ուր լինի, ինչ տեղ էլ նրան ուզենանան թաղցնել, երեան կը գայ:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ իւրաքանչիւր հեքիա-թով Աղայեանցը մի առաքինութիւն է պատկերացնում:

Աղայեանցի գրական գործունէութիւնը չի սահմանափակւում միայն վիպականութիւնը, նա ունի նաև ստանաւորներ, մի կողմ թողներով նրա ոչ մակական ստանաւորները, որոնց մէջ զգացունքի ուժեղութեամբ աշքին է լոնինում նրա «Մանկական թոթովանքութիւնը», ես կ'անցնեմ նրա մանկական ստանաւորներին:

Աղայեանցն իր ստանաւորների մէջ կարողանում է նիւթը վերածել երեխայի հասկացողութեան ստափճանի համեմատ: Դրանց այս յատկութիւնն է պատճառ, որ երեխանները համարեաւ առաջին ուշադիր ունենողութիւննից յետոյ արգէն անդիր գիտեն գրանց, քանի որ իրանց հասկացողութեան բոլորովին մատչելի բովանդակութիւնը գտնում են արտայայտուած պարզ մանկական լեզուով:

Օրինակ նրա «Զմեռ» ստանաւորը: Այստեղ ձմեռը գուրս է բերուած իրքի կեղծաւոր ձերումի, որ մարդկանց մէջ խըսրութիւն է զնում, հարուստին լաւ հապուստ ու կերակուր է տալիս, իսկ աղքատին մրսեցնում ու քաղցած է թողնում: Զըմբան կատարած այսպէս է պատկերացրուած

Դրա երկիրդից ջուրը բար կտրեց,  
Քչրչան առուն լրեց, պապանձւեց,  
Դալար բոյսերը սառան, վիտացան,  
Նախշուն հաւքերը թռան, հեռացան...  
Սիրուն վարդենու թուփի չօրացրեց,  
Սոխակի լեզուն արմատից կտրեց:

Զը յուստանատուող, հաստատակամ բնաւորութիւն է գուրս բերուած «Ծիծեռնակի յիշողութիւնները» ստանաւորում: Ծիծեռնակը անցեալ տարուայ բուն է յիշում, իր ձագերին է յիշում, որոնց արիւնարբու թշնամին ճանապարհին յափշտակեց, այժմ վերադարձել է, բունը աւերակ է գտել, բայց չի յուստատուում,

Բայց նա կրկին բոյն է շինում,  
Ե՛ւ շինում է, եւ երգում,  
Ամեն մի շիւլ կացնելիս  
Առաջուայ բոյն է յիշում:

Ահա և նրա «Պառաւի հորթը»; Քսան կարծ-կարճ տողերում ամիբովիուած մի ամբողջ դրամա է դա իր հանգոյցով, լուծումովի Այստեղ կը գտնէք և՛ հոգեկան կարւ, և՛ յուսահատութիւն, և՛ յուսագրութիւն, և՛ յաջող վախճան; Նախ տեսնենք, թէ ինչ պայմաններում առաջացաւ զրաման.

Զիւն էր զալիս փաթիլ-փաթիլ,  
Հետն էր անձրեւ կաթիլ-կաթիլ;

Այս մի քանի խօսքերով արդէն պատրաստ է ամբողջ մի-ջավայրը, որտեղ կատարուել է դրաման; Ապա իսկոյն ներկայանում են գործող անձինք.

Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր վնտրում դաշտի միջին;

Կովի վերադառնալու ժամանակն է, և պառաւը նախապէս սկսել է փնտրել հորթը, որ կովը եկածին պէս՝ ինքը շիւար չը մնայ; Բայց դա չի յաջողւում.

Կովը եկաւ տաւարիցը՝  
Կուրծք ու ծծեր կաթով լիքը.  
«Հորթուկս ուր է», նա բառաչեց,  
Խեղճ պառաւին լացացրեց:

Խեղճ պառաւը իր զգացմունքի քնքչութիւնից և յուսահատութիւնից չը գիմացաւ, արտասուեցի Եւ եթէ մի քիչ էլ երկարի այս դրութիւնը, կարդացող երեխան էլ կ'արտասուի, եթէ մանաւանդ նա իրանց տանը նոյնանման դէպքերի ականատես է եղել; Բայց երեխան այդ վիճակից ազատում է.

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
Ոլրում էին լաց ու կրծով,  
Յանկարծ լաւց մի բարակ ծայն,  
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Էլ երկարաբանութիւն հարկաւոր չէ. բարակ ծայնը բաւական է. որ կովը իր մայրական բնագդով իսկոյն ծանաչի իր

հորթուկին։ Յուսոյ ճառագայթը ծաղեց, Էլ այնքան յուսահատական չէ մթնոլորաբ։

Կովը վաղեց բառաչելով,  
Պառաւն հորից տնքտնքալով.  
Կորած հորթը մօրը գտաւ,  
Լիբ ծծերը բերանն առաւ։

Կովի բառաչելով վաղելը և պառաւի հնտեկը նրան  
անքտնքալով արդէն լրացնում են պատկերը՝ իրական ճշու-  
թեամբ վերաբազրելով մանուկի մտքում կովի պատկերը և ի-  
րանց տասիկի երբեմն տնքանքալով մի բանի շտապելը. դրա  
հետ միասին սպասողական լրառուած վիճակը համառում է իր գա-  
գաթնակէտին, երբ խուցւում է, որ կովը գտաւ հորթին և  
սկսեց իսկոյն ծծել։ Սպա իմանում ենք, որ հորթուկը

Նցեց բոլոր կամն ու տկդեց,  
Տանտիկնոջը բան չը թողեց.  
Բայց պառաւը այս անգամին  
Միրով ներեց չար հորթուկին,

Եւ գարմանալի էլ չէ. մի այդպիսի ուրախութեան առի-  
թով արժէր զոհել ամբողջ կաթը, և երեխերքն էլ, որ պիտի  
խմէին այդ կաթը, անշուշտ աւելի ուրախ են, որ մի անգա-  
մուայ կաթից կը գրկուեն, քան ամբողջ հորթուկից։

Գեղեցիկ անակնկալներ է պատրաստում երեխային «ջա-  
ղացպանի ննջարանը». նախ պատկերանում է ջրաղացը.

Երեր-չորս նատ շաղացարար  
Կարգով շարւած՝ պտտում են,  
Իրանց անեղ զրգոցով  
Ամբողջ շէնքը դրդում են.  
Զախարիների ըլիչըխկոցից  
Մարդի ականջ խանում է։

Եւ կթէ երեխան մի անգամ իրականութեան մէջ տեսել է  
այս, ինչպէս նրա երեակայութեան մէջ կը վերակենդանանայ  
ջրաղացը իր ամբողջ զրգոցով ու ժիրով։ Բայց ինչպէս նա կը  
գարմանայ, երբ կարգայ շարունակութիւնը.

Խոկ շաղացպանն ալրաթաթախ  
Խոր բունն ընկած՝ խոմիում է։

ի՞նչպէս կարելի է քնել այդ աղմուկի մէջ և այլ հարցեր  
պիտի առաջանան բնական հետաքրքրութիւնից չը գրեուած  
երեխայի մէջ. իսկ երբ նա շարունակի մինչև վերջը,

Բայց ջաղացը եթէ յանկարծ  
Կտրէ ձայնը, լոէ, սառչի,  
Խնջակս մի թունդ թնդանոցից՝  
Ջաղացպանը վեր կը թռչի...

այս տարօրինակութիւնը բոլորովին պիտի ապշեցնէ երեխային, որը պիտի կարելի զգայ այս երեխյի բացատրութիւնը լսելու։

Ոչ պակաս անակնկաներ է ապիկս և «Հովիփ անկողինը» նըր, Հովիփ մահճակալը ապրի լանջն է, բարձր՝ չեշոտ քարը, վերմակը մի հին կարպեա, սրա վրայ աւելացրէք և այն, որ

Երբ անձրեւ է կաթկաթում,  
Եւ կարպետը թիվթիւկում,  
Հովիւն անուշ քնի մէջ  
Քաղցր երազ է տեսնում  
Եւ իննում, ծիծաղում...

Եւ միում է միայն բացականչել՝

Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն հովիւ,  
Քունդ անո՛ւշ...

Ապա «Արև» ոտանաւորը։ Երեխան տեսել է, որ արեր մեզանից հեռացաւ դէպի հարաւ, ձևեւը եկաւ ու ամեն բան տարաւ։ Սյամ որ արեր նորից եկել է, երեխան արտայատում է իր գոհունակութիւնը, տեսնելով՝ թէ ինչպէս փթթել է ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ, թէ ինչպէս արեին են գովում

...Թունիկները  
Իրանց քաղցր դայլայլով,  
Հովիւն իր մեզմ սրինդով,  
Հոտաղն անուշ հոլոլով։

Եւ բանաստեղծը մանկանալով՝ իջնում է մինչև երեխայի հասկացողութեան աստիճանը, և ոտանաւորը մենք տեսնում ենք վերջացած հետեւեալ տողերով։

Ձե, արեւ ջան, Ել չը դնաս,  
Ել չը թողնես մեզ կարօտ,  
Գնան քնիր գիշերները,  
Առաւոտը Եկ մեզ մօտ:

Աղայեանցը ունի նաև թարգմանութիւններ, գլխաւորաբար ուսանաւորով: Նա թարգմանել է առհասարակ իր կազմած դասագրքերին նիւթ մատակարարելու համար: Դրանից զուտ, նրա բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ մենք զանում ենք երկու կտոր, մինը Շիլլերից՝ «Երկրի բաժանումը», միւսը Հայնէից՝ «Ֆըրգովսի»: Այս կտորները Աղայեանցի ուշադրութեանն են արժանացել՝ անշուշտ այն պատճառով, որ երկուսն էլ պատկերացնում են բանաստեղծի անշահասիրութեան օրինակներ:

Իրեն թարգմանիչ Աղայեանցը մի շատ ինքնուրոյն երեսյթ է: Նա նախ իւրացնում է նիւթը, ապա իր մաքում դասաւորելով՝ իրրե բոլորովին ինքնուրոյն բան արտայայտում է հայերէն լեզուով. այդ պատճառով նրա թարգմանութիւնները իր կողմից շարունակ անոււանում են «փոխադրութիւն»: Իր սեփական ոճի պահանջը նրանում այնքան զօրեղ է, որ նրա դասագրքերի մէջ երբեմն հանդիպում էր «փոխադրութիւն» բառը դրուած մի... հայերէն կտորի վրայ. օրինակ՝ նա ունի մի կտոր իր ժողովածուի մէջ «Բանակութ» վերնագրով, որ Սքովեանից է, նըրա «Յոռեր» հատուածն է, որի լեզուն Աղայեանցը աւելի կոկուել ու գրական է դարձել: Խնչպէս ասացի, նրա թարգմանութիւնները բոլորովին ինքնուրոյն դրուածքի ընաւորութիւն ունեն: Եւ այդ իսկ պատճառով՝ օտար լեզուի որեէ ոճի համապատասխան հայերէնը չը գոտնելիս՝ նա շատ անզամ թարգմանութիւնը ընդարձակում է պարզաբանութիւններով: Այդ է պատճառը, որ Պուշկինի «Ոսկի ձկնիկը», որ բնագրուած 205 տող է, Աղայեանցը թարգմանել է 313 տողով, այն ինչ նոյն բանը Գամառ-Քաթիպան կարողացել է անել 198 տողով: Վերցնենք օրինակ այս կտորը.—բնագրում այսպէս է:

Говорить старику старуха:  
„Воротись, поклонися рыбкѣ;  
Не хочу быть вольною царицей,  
Хочу быть владычицей морскою,  
Чтобы жить мнѣ въ океанѣ-морѣ,  
Чтобъ служила мнѣ рыбка золотая  
И была бѣ у меня на посылкахъ“.

**Այս կտորը Գ.-Քաթիպան այսպէս է թարգմանել.**

Երբ եկաւ ծերը, կինն ասաց նորան.  
 «Ո՞հա լսէ դռ իմ խիստ ճրաման—  
 Գնա ու զտիք դռ ուսկի ձկան,  
 Էլ սիրոք չուզէ, ասա, իմ կնկան  
 Երկրի վրայ լինել մէկ սոսկ թագուհի,  
 Ովկիանոս ծովի մէջ կուզէ կենալ,  
 Ոսկի ծուկին էլ ծառայ ունենալ»:

**Իսկ Աղայեանցինը այսպէս է.**

Եկաւ ծերունին, պառան սկսեց.  
 «Դու պէտք է զնաս ձկան մօտ, ասեց.  
 Կերթաս խոր գրւիս կտաս դռ նրան  
 Ու իմ փափազը կը յայտնիս իրան.  
 Կասես, չեմ ուզում մնալ թագուհի,  
 Ուզում եմ լինել ծովի տիրուհի.  
 Ուզում եմ Ովկիան ծովումը կենալ,  
 Ոսկի Զկնիկին ծառայ ունենալ,  
 Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,  
 Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի...»:

Գամառ-Քաթիպայի մօտ աւելորդ է երկրորդ առջը, որ ընազրուժ ըլ կայ, զբա փոխարէն պակաս է վերջին առզի թարգմանութիւնը: Իսկ Աղայեանցը բերուած կտորի երկրորդ առջի զիմաց զնումը է ամբողջ երեք առող փոխանակ ասելու, թէ ցիտ դարձիր կրկին, զլուխ առուր ձկան», կամ ինչպէս ինքը աւելի լաւ կարող էր, ասում է. «Դու պէտք է զնաս ձկան մօտ, կերթաս, խոր զլուխ կը տաս դռ նրան ու իմ փափազը կը յայտնիս իրան», որի մէջ կան և կրկնութիւններ և աւելորդ խօսքեր: Իսկ վերջին առջը, որտեղ զլիսաւորաբար կայ „быть на посылкахъ“ ոճը, որ Գ.-Քաթիպան չէ թարգմանել, բնազըրի նրբութիւնը արտայայտելու համար՝ կամ թարգմանութիւնը անպատճառ յանդաւոր դուրս բերելու համար՝ դրել է.

Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,  
 Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի,

որը բաւական մօտիկ արտայալում է „быть на посылкахъ“

ոճի միաքը, որ նշանակում է՝ ձեռքի տակ ծառայ լինել՝ այս ու այն կողմ ուղարկելու համար:

Սյազիսով բնագրի սեղմ, ժողովրդական ոճը նա մի փոքր ջրախառնելով՝ աւելի հասկանալի է դարձրել մասուկի համար: Եւ մենք գուցէ ուրիշ պահանջ իրաւունք չունենք անելու նըրանից, իբրև թարգմանչից, քանի որ նա իր թարգմանութիւնների վրայ գնում է «վոխադրութիւն» կամ «աղատ թարգմանութիւն» բառերը:

Վերջացնելով Աղայեանցի կեանքի և զրական գործունեութեան մասին այս ահսութիւնը, մնում է ամփոփել ասածս:

Մեր վիպագրութեան պատմութեան մէջ Աղայեանցն ունի իր համեստ աեղը—նա իր Ար. եւ Մանուկ՝ հայ վէպը աւելի մօտեցրեց վէպի մասին ժամանակակից հասկացողութեան: Բայց Աղայեանցը մեղանում չը պիտի վիպասան համարուի, որովհետեւ զրականութեան այդ ճիւղի պահանջներին նա բաւարարութիւն չի տալիս: Դրա փոխարէն նա չ'ունի իրան հաւասարը մեղնում վիպագրութեան մի ուրիշ ճիւղի՝ հէրիաթների մէջ, որոնք նրա զրչի տակ մարդի ամբողջապէս ման են ածում և ապրեցնում կախարդական աշխարհներում: Մանկական ոտանաւորների մէջ եւս Աղայեանցը չ'ունի իր հաւասարը: Իբրև զրո՞գ՝ նա իր ամբողջ ողերութիւնը քաղում է իր կեանքից՝ իր կեանքի երեսյթները համարելով շատ խրատական և ուրիշի համար էլ օգտակար, այդ պատճառով նրա զրուածքներում այնքան շատ նկատելի է այդ կողմը, և ահա թէ ինչու նրան կարելի է անուանել իր կեանքի երգիչ:

ՄԱՐ. ՅԱՐ.